ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**

Համիկ Հակոբյան

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի գլխավոր քարտուղար

2. **Գործուղման վայրը և ժամկետները**

ք. Թբիլիսի (Վրաստանի Հանրապետություն), 2026թ. Օգոստոսի 07-08

3. **Հրավիրող կողմը**

ՀՀ-ում գործող տրանսպորտային միջոցների մատակարարում և սպասարկում իրականացնող կազմակերպության հիմնադիր հանդիսացող վրացական կազմակերպություն /TEGETA/

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

Կրթական կլաստերների ձևավորման համատեքստում դպրոցահասակ երեխաների տեղափոխման նպատակով ձեռքբերվելիք ավտոբուսների տեղում այլ գերատեսչությունների (փոխվարչապետի գրասենյակ, ՆԳՆ, ՏԿԵՆ) գործընկերների հետ համատեղ դիտարկում և դրանց՝ անհրաժեշտ անվտանգության չափանիշներին համապատասխանեցման հնարավորությունների քննարկում

5. **Քննարկված թեմաները**

Քննարկվել են կրթական կլաստերների ձևավորման համատեքստում դպրոցահասակ երեխաների տեղափոխման նպատակով ավտոբուսների ձեռքբերման պարագայում հասանելի քանակի, մատակարարման ժամկետների, անվտանգության չափանիշներին համապատասխանեցման համար անհրաժեշտ գործողությունների վերաբերյալ մանրամասներ

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Հանդիպումներ են տեղի ունեցել վրացական կազմակերպության ներկայացուցիչների, այդ թվում բարձրաստիճան ղեկավարության և սեփականատիրոջ, ինչպես նաև ՀՀ-ում գործող կազմակերպության տնօրենի հետ: Իրականացվել է այց կազմակերպության տրանսպորտային միջոցների սպասարկման կենտրոն, որտեղ տեղում այլ

գերատեսչությունների (փոխվարչապետի գրասենյակ, ՆԳՆ, ՏԿԵՆ) գործընկերների հետ համատեղ դիտարկվել և փորձարկվել է ձեռքբերվելիք ավտոբուսը: Կողմին ներկայացվել են ՀՀ-ում գործող ոլորտային իրավակարգավորումները, գնման ընթացակարգերի առանձնահատկությունները, ինչպես նաև մանրամասն քննարկվել են ավտոբուսների լրացուցիչ կահավորման ու տեխնիկական հագեցումներ իրականացնելու հնարավորությունները, մեխանիզմը, ժամկետները:

**7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Կողմերը պայմանավորվեցին այցի շրջանակներում ձեռքբերված տեղեկատվությունը ներկայացնել ՀՀ փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի մոտ կայանալիք քննարկման մասնակիցներին, համապատասխան որոշման մասին տեղեկացնել մատակարար կազմակերպությանը:

**8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**

Հայկական կողմը առաջարկեց մատակարար կազմակերպությանը հնարավորինս սեղմ ժամկետում (10.08.2026թ.) ներկայացնել վերջնական գնային առաջարկ, որն էլ ՀՀ փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի մոտ քննարկման արդյունքներից ելնելով դրական դիրքորոշման պարագայում հիմք կհանդիսանա ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից ավտոբուսների ձեռքբերման նպատակով գումարի հատկացման համապատասխան կառավարության որոշման նախագծի շրջանառման և հետագա գնման գործընթացների մեկնարկի համար:

**9. Ստորագրությունը, ամսաթիվը**

8/12/2026

X 

ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

Signed by: HAKOBYAN HASMIK 5610800161

Հասմիկ Հակոբյան

12 օգոստոսի 2026թ.